



# ՄԱՄԱՐՈՒԱՆԴ ՏԱՆՈՂ ԷՇԵԼՈՆԸ

← ≡ 477 ≡ →

Bookmark

ГУЗЕЛЬ ЯХИНА



**ЭШЕЛОН  
НА САМАРКАНД**

РОМАН

BOOKMARK

ԳՈՒԶԵԼ ՅԱԽԻՆԱ



# ՍԱՄԱՐՂԱՆԴ ՏԱՆՈՂ ԷՇԵԼՈՆԸ

ՎԵՊ

Թարգմանությունը ռուսերենից՝  
Մարիամ Հարությունյանի



ԵՐԵՎԱՆ  
2023

ՀՏԴ 821.161.1-31 Յախինա  
ԳՄԴ 84(2)-44  
Յ 220

Յախինա Գուգել  
Յ 220 Սամարղանդ տանող էշերնը: Վեպ / Գ. Յախինա; Թարգմանությունը  
ռուսերենից՝ Մ. Հարությունյանի.- Եր.: Newmag, 2023.- 456 էջ:

1923-ին էշերնի պետ Դեևր և կոմիսար Բելայան Կազանից Սամարղանդ են տարհանում 500 թափառաշրջիկ, քաղցած երեխաների: Հոգնատանջ ճանապարհ, սարսափելի արկածներ, ընդարձակ աշխարհագրություն՝ Վոլգայի շրջանի անտառներից և դազախական տափաստաններից մինչև Կզըլկումի անապատներ և Թուրքեստանի լեռներ, բարդ ճակատագրեր և ռեալիստիկ կերպարներ՝ փախստական գյուղացիներ, չեկիստներ, կազակներ, փոքրիկ թափառականների էքսցենտրիկ աշխարհ՝ իր լեզվով, հոգեբանությամբ, սնահավատությամբ և մեծ հույսերով:

ՀՏԴ 821.161.1-31 Յախինա  
ԳՄԴ 84(2)-44



Գրքի գլխավոր գործընկեր  
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ  
[www.ena.am](http://www.ena.am)

ISBN 978-9939-884-97-4

Գուգել Յախինա «Սամարղանդ տանող էշերնը» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ

© Guzel Yakhina, all rights reserved

Published by arrangement with ELKOST Intl. Literary Agency

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակման բոլոր իրավունքները պատկանում են «Օրակույ» և Newmag ընկերություններին: Համաձայն կնքված պայմանագրի՝ «Օրակույ» հրատարակչության գրքերը ներկայացված են որպես Newmag ընկերության «Օրակույ» հայ-ռուսական մատենաշար: Գրքի հայերեն թարգմանության և հրատարակման իրավունքները ձեռք են բերվել ELKOST ընկերության հետ կնքած պայմանագրով:

## Բովանդակություն

I	500 հոգի	9
II	Երկուսով	75
III	Սատանայի դյուժին	199
IV	Մենակ	261
V	Հանում և գումարում	285
VI	Եվ կրկին 500	361
VII	Երեքով	423
	Երախտագիտության խոսք	453

Հորս՝ Շամիլ Զաֆրեևիչ Յախինին



Bookmarkark

## 500 հոգի



## Կազան

6400 կիլոմետր. ուղիղ այսքան պիտի անցնեք Կազանի երկաթուղու սանիտարական գնացքը, որ հասնելու թուրքեստան: Բայց այն դեռ չէր եկել. հրամանը դուրս էին գրել նախորդ օրը՝ 1923 թվի հոկտեմբերի 9-ին: Ոչ էլ ուղևորներ կային: Պիտի հավաքել մանկատներից և հավաքակալաններից՝ 2-12 տարեկան աղջիկների ու տղաների՝ ամենից թույլերին ու հյուծվածներին: Իսկ ահա էշելոնի պետ արդեն կար՝ Քաղաքացիականի ճակատայիններից՝ երիտասարդ Դեևր: Հենց նոր էին նշանակել:

— Երեխեք են, — ողջույնի փոխարեն ասաց տրանսպորտային բաժնի հրամանատար Չայանովը: — 500 հոգի: Կազանից հասցնել Սամարղանդ: Հանձնագիրն ու հրահանգները քարտուղարից կստանաս:

Տրանսպորտային բաժնում աշխատելու տարիներին Դեևն ինչ ասես չէր փոխադրել՝ բռնագրավված հացահատիկից ու անասուններից մինչև ցիստեռներով կետի յուղ, որ բարեկամ Նորվեգիան էր ուղարկել սովահար Պովոլոժին: Բայց այ երեխաների առաջին անգամ էր ուղեկցելու:

— Երբ ենք շարժվում:

— Թեկուզ վաղը ևեթ: Հենց կազմը հավաքվի, թռեք, Դեև, հավքի թևով: Երեխեքը երկար ճանապարհ չեն սիրում, շուտով ինքդ կհասկանաս:

Ահա և ամբողջ գրույցը՝ մի քանի բուպե, ոչ ավելի: Միայն թե պարզ չէր՝ ինչ էր նշանակում «ինքդ կհասկանաս»: Ինչևէ, խորհելու ժամանակ չկար: Երկար մտորումները ծերուկների գործն են. նրանք շատ ժամանակ ունեն:

Նախ՝ երկաթուղու տնօրենության մոտ գնաց: Խոսք էին տվել, որ ամեն ծակուծուկ կնայեն, ու ընդամենը մի վագոն էին ճարել՝ նախկին առաջին դասի, մի ժամանակ ազնվական կապույտ, հիմա արդեն՝ գունատ-մոխրագույն, սրահը՝ պատված միայն տեղ-տեղ պատռված գորելենով, գրեթե ամբողջական հայելիներ ու լայնարձակ դահլիճ, որտեղ ցանկության դեպքում կարելի էր վալս պարել: Մի ժամանակ այնտեղ ճանապարհային գրադարան է եղել, նույնիսկ ռոյալ կար, իսկ հիմա աչքի էր զարնում մաշված չուգունե լոգարանը (երևում է՝ լվացքատուն-բաղնիքից էին բերել ու մոռացել): Դատարկ գրադարակների ու սևացած մոմակալների կողքին այն անձոռնի տեսք ուներ: Դեռ ճակատը կնճռոտեց, բայց վերցրեց վագոնը: Միանգամից հրամայեց պոկել գորելենն ու գրողի ծոցը շարտել մոմակալների հետ միասին, խցիկում ուղեբեռի նրբաճաշակ ցանցերի փոխարեն քնադարակներ շարել երկրորդ ու երրորդ հարկով: Իսկ լոգարանը թողնել: Արդեն ուզում էր դրա հետ մի հատ էլ չուգունից վառարան պահանջել, որ երեխաները լոգանքի ջուրը տաքացնելու տեղ ունենային, բայց նրան բուրժոյ անվանեցին, ու տաք ջրի գաղափարն այդպես էլ մնաց օդում կախված:

Երկրորդ վագոնը հաջորդ օրը նոր տեղ հասավ. ուղարկել էին Կրասնայա Գորկա գյուղից, որտեղ այն չորս տարի ծվարել էր շոգեքարշային դեպոյի մի խուլ անկյունում: Դեռ նայեց ավարին ու սարսռաց. հասարակ վագոն չէր ախր, շարժական եկեղեցի էր: Երևի այդ պատճառով էլ այսքան երկար մնացել էր պարզարանում, դժվարացել էին սովետական որևէ պահանջի ծառայեցնել: Կանաչած բրոնզը, ասենք, դեռ կարելի էր պոկել գմբեթից, խորանը քանդել: Իսկ ինչ պիտի անեին կարմիր քիվով կամարածև լուսամուտները: Բա տանիքի տակի կոկոշնիկը\*... Դեռն այս մի վագոնն էլ ընդունեց: Մի բան էր ուրախացնում՝ ընդարձակ է:

— Քանի՞ հարկ նստարան խփենք, — հարցրեց ատաղձագործական արտելի գլխավորը:

— Թող երեք լինի, — ձեռքը թափ տալով ասաց Դեռը: Չորսն էլ կտեղավորվեր, բայց երեխաները գուցե վախենային ամենավերևի հարկ մագլցելուց:

Մի քանի օրից ուղարկեցին վագոն-խոհանոցը՝ նեղլիկ արկղ անիվների վրա, հապճեպ իրար մեխած ողորկ տախտակներ, որ հետո նորոգել են

\* Կոկոշնիկ - ռուսական տների կիսակլոր, վահանածև ճակատազարդ (ճանոթագրությունները՝ հեղինակի և թարգմանչի):



խորդուբորդ փայտերով, նրբատախտակից կարկատան դրել, իսկ տանիքի փոքրիկ պատուհանից դուրս էր ցցվել կեռումեռ ծխնելույզը: Ասում էին՝ Սիմֆիրսկի խուլ փողոցներում դեռ 1919 թվից այսպիսի զիբիլ ամեն քայլափոխի կար, ու Դեմն ինչ-որ պիտանի բան հաստատ կգտներ, բայց ստուգելու համար այնտեղ հասնելու ժամանակ չունեի:

Վերջապես կազմաքանդեցին նաև Մոսկվայից հասած մարդատար գնացքն ու հինգ վագոնները շարքով մոտեցրին Դեմի էջելոնին, որը ճանապարհային աշխատողները հասցրել էին իրար մեջ «ծաղկաշղթա» կնքել՝ վագոնների գույնի ու ձևի բազմազանության պատճառով: Ծխահար ու ապականված վագոնները՝ բոլորը պլացքարտային, ոչ թե ատաղձագործների կարիք ունեին, այլ հիմնովին մաքրվելու: Բայց Դեմն իր պահանջներով արդեն այնքան էր տանջել կայարանի ղեկավարությանը (հետն էլ ամեն բան «անհապա՛ղ», «այս պահի՛ն» ու «անպայման»), որ հրաժարվեցին մաքրող կանչել: Թքեց, մի քանի դույլ ջուր լցրեց ու սկսեց ինքնուրույն լվանալ:

Ահա, թե երբ հայտնվեց նա: Դեմը կտորը ձեռքին սողում էր թաց հատակով ու փորձում նստարանի տակից հավաքել արևածաղկի կեղևների կուտը, մեկ էլ հենց դեմքի առաջ հետևակայինի բուֆ քթերով մի զույգ կոշիկ տնկվեց: Աչքերը վեր հանեց. բարակ սրունքներ, որոնց վրա ոչ թե զինվորական կտոր էր, այլ նուրբ բրոյա գուլպաներ:

— Ա՛յ մարդասպան, — այսպես սկսեց խոսել: — Ի՛նչ եք մլուլ տալիս:

Դեմը շշմեց: Մի քիչ էլ է բարձրացնում աչքերը՝ սև, նեղ կիսաշրջագգեստ, իսկ դրա մահուդի տակ՝ սուր ծնկներ:

— Մինչ այստեղ փորը գետնին գցած քարշ եք տալիս, երեխաներ են մահանում:

Դեմը փորձեց դուրս գալ նստարանի տակից ու նստել, բայց ծոծրակը կպավ տախտակի եզրին:

— Դո՛ւ ով ես, — կանանցից նա երկյուղում էր, ուստի դիմում էր բացառապես դու-ով ու իրեն հպարտ, կարելի է ասել, մարտական տեսք էր տալիս:

— Մանկական կոմիսար: Ձեզ հետ մինչև Սամարղանդ գալու եմ, եթե բարեհաճեք վեր կենալ ջրի միջից ու անցնեք հրահանգի կատարմանը:

— Գո՛նե անուն ունե՛ս, կոմիսար:

— Բելայա:

Դենն այդպես էլ չհասկացավ՝ դա անունն էր, թե ազգանունը: Նորից հարցնել չհամարձակվեց:

Կինն իրենից մեծ էր, բայց մոր տեղ չէր անցնի: Ավելի շուտ՝ ավագ քրոջ: Դենքը գեղեցիկ էր ու խիստ՝ իսկը պաստառին պատկերելու: Խարտյաշ մազերը կարճ էին, ու խոպոպներն ընկնում էին այսուայնկողմ: Հայացքն ինքնին շեշտում էր՝ առնվազն բանակի հրամանատար է: Այդպիսի հայացքի ճնշումից անմիջապես ուզում էիր վեր ցատկել ու կարգի բերել քեզ, բայց Դենը զսպեց իրեն. անշտապ ուղղելով ճակատին կախված մազափունջը (միաժամանակ նաև պոկելով մաշկին կպած մի քանի կեղևիկ)՝ կտորն անփույթ շարժումով նետեց դույլի մեջ (ջուրը դուրս թռավ պռունկից, թափվեց կոմիսարի կոշիկներին) ու մնաց գետնին նստած՝ միայն մի փոքր փռված:

— Իսկ կարո՞ղ է մաքրության հարցում օգնես, ընկեր Բելայա: Թե՞ ժողովրդին փարախում ենք տանելու:

— Կարող է, – լուրջ տոնով ասաց կոմիսարը: — Բայց գիշերը, երբ երեխաները քնած կլինեն:

— Իսկ ես ու դու, ստացվում է, չենք քնելու, – խայթեց Դենը: Իրականում չէր ուզում կոպիտ թվալ, բայց լեզուն իրենից առաջ ընկավ:

Ու նույն պահին ամաչեց այդ անտեղի անպարկեշտության համար: Ոտքի ելավ, թափ տվեց վեր քշտած տաբատն ու մերկ ծնկները: Երբ մեջքն ուղղեց, հասկացավ, որ հյուրին ներքևից է նայում. կոմիսար Բելայան կես գլուխ իրենից բարձր էր:

— Վախենամ՝ իսկապես չենք քնելու, Դեն, – աչքերի մեջ նայելով՝ ասաց կոմիսարը, և Դենը վերջապես տեսավ նրա աչքերը՝ մոխրագույն, սառը, ուղիղ թարթիչներով: — Մինչև Սամարղանդ չենք քնելու:

...

Րոպեներ անց արդեն քայլում էր Բելայայի հետ, կարելի է ասել՝ սուրում էր կաթկթացող անձևից թրջված ճանապարհով՝ ամեն կերպ փորձելով չսայթաքել ու չվազել: Կոմիսարը ոտքերը լայն էր գցում՝ բաց թողնելով ամեն երկրորդ կոճափայտը. իզուր չէ, որ ոտքերը բարակ էին, աղջկական, իսկ կազմվածքը՝ նուրբ, հազիվ նկատելի բուշլատի հաստ շերտերի

տակ, որ կաշեգոտով օղակում էր իրանը: Դեևը հետևում էր նրա քառակուսի կոշիկների սրընթաց շարժին ու մտածում, որ դրանց մեջ անպայման փոքրիկ ու նեղ ներբաններ են: Սայթաքեց, հայհոյանք թռավ բերանից. վանեց անվայել միտքը:

— Կփորձեն մեծացնել քվոտան, չհամաձայնե՛ք,– Բելայան արագ-արագ էր խոսում՝ առանց գլուխը զրուցակցի կողմ թեքելու, կարծես բառերն օդ էր կրակում, և Դեևը ստիպված էր արագացնել քայլքը, որ հրահանգները լսելի լինեն: — Կփորձեն լավացողների անվան տակ հիվանդների ավելացնել, չհամաձայնե՛ք:

Դեևը ոչ մի կերպ գլխի չէր ընկնում՝ ում հետ պիտի չհամաձայնի: Այլ կերպ ասած, ում կողմ էր այդպես անգթորեն կրակում կոմիսարը:

— Կսկսեն խղճի վրա ազդել, ամենն ինձ վրա գցեք: Հենց այդպես էլ կասեք՝ թե բա այդ Բելայան անսիրտ ու սկզբունքային է, հետը խոսել չի լինում, մարդ չէ, քար է...

— Բայց ախր ես եմ էշելոնի պետը,– ամեն դեպքում հիշեցրեց Դեևը:

— Պետը Դուք եք,– ընդունեց Բելայան,– բայց ինձ վրա գցեք: Իսկ ավելի լավ կլինի՝ լռեք. ինքս ամեն բան կասեմ:

Դուրս եկան կայարանի խուլ նրբանցքներով ու շուտով հայտնվեցին քաղաքի սրտում, որտեղ գլխավոր հրապարակի դիմաց կանգնած էր գրանիտե ու մարմարե դոյակը՝ երեք գրկաչափ սյուներով ու մարդու հասակից բարձր պատուհաններով: Երբեմնի Ազնվական ժողովն էր, որն այժմ վերածվել է Կազանի համար մեկ տարհանհավաքակայանի: Կարմիր Թաթարիայի\* հեռու և մոտ անկյուններից այստեղ էին բերում այն երեխաներին, որոնց ծնողները չէին ցանկանում կամ չէին կարող կերակրել. հենց այստեղից էլ ակնկալվում էր հավաքել էշելոնի ուղևորների մեծ մասին:

Սակայն մոտիկից հավաքակայանը ոչ թե պալատի էր նման, այլ պաշարված ամրոցի: Նկուղային լուսամուտները զմռսած էին տախտակներով, որոշները՝ երկու շերտ, իսկ առաջին հարկի նետաձև պատուհաններին փակցրել էին երկաթյա թիթեղներ ու նրբատախտակ: Ճերմակ մարմարե սյուներին ճաքերի հաստ ցանց էր կապել: Պատերին այնքան շատ փոս կար, որ թվում էր՝ դրանք շարել են սարսափելի փխրուն ու

\*Կարմիր Թաթարիա – Խորհրդային Թաթարստանի անվանումը, որ կիրառվում է առօրյա խոսքում:

ծակոտկեն ինչ-որ քարից (Դեւը միանգամից հասկացավ՝ մանր փոսերը փամփուշտներից են մնացել, մեծերը՝ արկերից): Շենքը խիստ ու անմատուց տեսք ուներ, ասես շուրջը դեռ շարունակվում էր Քաղաքացիական պատերազմը: Բայց ումից էին պաշտպանվում ներսի մարդիկ, չլինի՞ հաստատությունը պաշարող երեխաներից:

Նրանք ամենուր էին՝ մուտքի գրանիտ սանդուղքին, պատերի շուրջբոլորը փռված թերթերի վրա՝ 10-20 փոքրիկ, կեղտոտ մարմիններ, որ մինչև ունքերը փաթաթված էին լաթեղենի մեջ ու անշարժ թրջվում էին անձրևի տակ: Առաջին անգամ չէր, որ Դեւը նման պատկերի էր ականատես լինում, բայց առաջ երբեք չէր մտածել՝ ինչից է, որ երեխաները հավաքակալանի դրսում էին, ոչ թե ներսում:

Բելայան ձիասայլերի համար նախատեսված թեքահարթակով բարձրացավ շքամուտք ու թակեց դուռը: Պատասխան չեղավ: Մի անգամ էլ թակեց՝ ավելի ուժեղ, քաշքշեց բռնակը, բայց դարձյալ ապարդյուն: Կանգնեց ոտնաթաթերին ու ափը մի քանի անգամ զարկեց լուսամուտի որմնանցքը ծածկող նրբատախտակին. քիչ էր մնում՝ մեխով վնասեր ձեռքը:

Ամրոցը լուռ էր: Դրա ստորոտին պառկած երեխաները՝ նույնպես:

Ոչ ոք նույնիսկ գլուխը չթեքեց: Ծույլ հետաքրքրությամբ մի քանի զույգ աչքեր հետևում էին կնոջ գործողություններին, և միայն մի տղա՝ փոքրամարմին, թուխ դեմքով, որ կեղտոտ կարտոֆիլի էր նման, ավելի հարմար տեղավորվեց, որ բաց չթողնի ներկայացումը: Բելայան հենց նրա կողմ նայեց:

— Ինչո՞ւ չեն բացում, — հարցրեց ընկերական ձայնով:

Եվ ո՞ւր կորավ այն հրամայական տոնը, այն իշխանական հայացքը՝ զարմացավ Դեւը: Փաստորեն կոմիսարն ընդունակ է նաև մարդկային ձևով խոսել:

Տղան մի պահ ձայն չհանեց՝ հայացքը շրջելով այսուայնկողմ, նայեց վեր, որտեղից ընկնում էին անձրևի մանր կաթիլները:

— Ուշացել եք, — չուզելով արտասանեց նա: — Վաղը եկեք. առավոտյան նրանք բարի են լինում:

— Մեզ հիմա է պետք, — հոգոց հանեց Բելայան: — Կարո՞ղ է ուրիշ ձև էլ կա... Օգնի՛ր:

Ու տղան դարձյալ մի փոքր հապաղեց, կարծես բառերը հեռվից էին նրա ականջներին հասնում:

— Բա իմ օգնությունը որն է:

— Կպատմեմ, թե ինչ անես, որ քեզ ընդունեն: Որ այսպես դռան տակ ողորմություն չխնդրես ու շորերովդ մուտքը չսրբես: Որ քույրերն իրենք քեզ թևի տակ առնեն ու ներս տանեն, լողացնեն, կերակրեն ու բաժին հատկացնեն:

— Խաբո՞ւմ ես, – նույն պահին ժպտաց տղան՝ ցուցադրելով սևացած ատամները:

— Այսօր կեսգիշերին շուրջկալելու են Գետաբերանը. մանկկոմիսիան ու միլիցիան ափն են մաքրելու: Ում բռնեցին, տանելու են հավաքակայաններ: Էնպես որ ով տաք տեղ ու ուտելիք է ուզում, մինչև մայրամուտ պիտի Գետաբերանում լինի: Իսկ ով չի ուզում, թող գնա գրողի ծոցն ու ոտքի տակ չընկնի: Հասկացա՞ր: Մյուսներին էլ կփոխանցես:

Կարտոֆիլ-դեմքը կնճռոտվեց. տղան կասկածանքով շարժեց ունքերն ու ծոնռեց ռոնգերը:

— Դանակը՝ սիրտս, մեխերը՝ աչքերս, – Բելայան բռնեցքով հարվածեց իր կրծքին, ասես դանակ է խրում կողոսկրերի արանքը, ու տղայի դեմքը միանգամից հարթվեց, դավադրաբար ժպտաց: — Իսկ հիմա օգնիր, – կրկին խնդրեց Բելայան:

Տղան ոտքի ելավ՝ դանդաղ, հազիվ շարժելով վերջույթները, ասես ոչ թե գետնից, այլ գետի հատակից էր ելնում, ու մոտեցավ մուտքի դռանը: Հետո շրջվեց մեջքով ու մի, ակնթարթում կորցնելով հեղգությունը, սկսեց կատաղի հարվածել կրունկներով ու բռնեցքներով. այնպես եռանդազին էր թակում, որ ծանր, լաքապատ փայտը ցնցվեց, ծխնիները ճռնչացին:

— Ավելի ուժեղ է պետք ծեծել, – բացատրեց տղան՝ առանց կանգ առնելու, շնչակտուր լինելով իր այդ աղմկոտ գործից: — Որ իրենց պես համառ չեղար, բան դուրս չի գա:

— Արդեն ասացի՝ տեղ չկա՛, – բռնեց չանցած գոչեցին պատուհաններից մեկից:

Բայց տղան շարունակում էր թակել չթուլացնելով թափը, և շուտով դռներից մեկում բանալի պտտվեց: Նույն պահին մանչուկը մի կողմ ցատկեց, ու դռան ճեղքից դուրս ցցված ցախավելը պտույտ արեց օդում:

— Կորի՛ր այստեղից, լակո՛տ, – բացված դռան հետևում երևաց կանացի փարթամ մարմին, որ թրի պես թափահարում էր ցախավելը: — Սատանան քեզ տանի: